ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Նարեկ Գանձափարի Սարգսիկյանի «Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Նորամուծական գործունեության հաջողության գլխավոր նախապայմաններից է նորամուծական միջավայրի ձևավորման աջակցմանն ուղղված պետական քաղաքականությունը, որն իրականացվում է վերոնշյալ գործունեությունը կարգավորող իրավական դաշտի՝ օրենսդրական և նորմատիվ-իրավական մեխանիզմների ստեղծման ճանապարհով: Միաժամանակ հարկ ենք համարում արձանագրել, որ ՀՀ-ում նորամուծական տնտեսության ձևավորմանը գրեթե ներգրավված չեն մարզերը, և այս ուղղությամբ կարելի է ասել բացակայում է միասնական և համակարգված պետական քաղաքականությունը:

Տարածքային ինովացիոն համակարգի (ՏԻՀ) դերը կարևորվում է ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալական առումով: ՏԻՀ-ը նպաստում է տվյալ տարածաշրջանի մարդկային կապիտալի զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և տարածաշրջանի ակտիվ ներգրավմանը տարածքային և միջազգային տնտեսական գործընթացներին:

Մի շարք առաջատար երկրներ մեծ ուշադրություն են դարձնում տարածքային ինովացիոն համակարգի զարգացմանը՝ այն դիտարկելով որպես երկրի տնտեսության հավասարաչափ զարգացման, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, մարդկային կապիտալի կուտակման, արտագաղթի ծավալների կրճատման ու ապակենտրոնացման հիմնական միջոցներից մեկը:

Տարածքային ինովացիոն համակարգի դերը խիստ կարևոր և կենսական նշանակություն ունի նաև ՀՀ-ի համար: Ունենալով կենտրոնացման բարձր մակարդակ, հատկապես, մարզային բնակչության շրջանակներում՝ ՏԻՀ-ը կարող է դիտարկվել վերոնշյալ խնդիրների լավագույն լուծում:

Տարածքային ինովացիոն համակարգի կառավարման հիմնախնդիրներին անդրադարձել են մի շարք հեղինակներ, սակայն ՀՀ պետական քաղաքականության շրջանակում այսպիսի ծրագրերի իրականացման մեծ արդյունքներ չեն արձանագրվել, հետևաբար, վերոնշյալ մոտեցումները և խնդիրները դեռևս իրենց ամբողջական լուծումները չեն ստացել:

Գրախոսվող ատենախոսությունը նվիրված է վերոնշյալ հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրության, այդ ոլորտում առկա հիմնական կապերի ու ազդեցությունների բնույթի բացահայտման, ինչպես նաև դրանց հետ կապված արդյունավետ գիտագործնական լուծումների և տարածքային գիտական համակարգի ձևավորման ու զարգացման առաջարկությունների մշակման անհրաժեշտությամբ, որով էլ պայմանավորված է ընտրված թեմայի հրատապությունը և արդիականությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Ատենախոսության նպատակն է վերլուծել ՀՀ տարածքային ինովացիոն համակարգերի ձևավորման, զարգացման և կառավարման հիմնական ուղղությունները՝ հիմնվելով միջազգային փորձի, ՀՀ տնտեսության զարգացման արդի միտումների և տարածքային քաղաքականության առանձնահատկությունների վրա:

Սահմանված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- վերլուծել և ընդհանրացնել ՏԻՀ-ի զարգացման տեսական և մեթոդաբանական հիմքերը,
- ուսումնասիրել միջազգային փորձը՝ ՏԻՀ-ի կառավարման մոդելների համեմատական վերլուծության միջոցով,
- բացահայտել ՀՀ-ում ՏԻՀ-ի ձևավորման հիմնական խոչընդոտներն ու զարգացման գործոնները,
- մշակել և հիմնավորել ՏԻՀ-ի զարգացման ու կառավարման նոր մոտեցումներ՝ հիմնվելով կատարողականի առանցքային ցուցիչների վրա,
- առաջարկել ՏԻՀ զարգացման հնարավորությունների գնահատման համընդհանուր ցուցիչ՝ հիմնված տարածքային ինովացիաների իրականացման ռեսուրսային հնարավորությունների, ինչպես նաև կազմակերպաիրավական գործոնների վրա:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատության ընդհանուր ծավալը կազմում է 156 էջ՝ առանց հավելվածների:

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, կիրառման ոլորտները, ձևակերպված են հետազոտության նպատակն ու հիմնախնդիրները, տրված են հետազոտության առարկան և օբյեկտը, ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին՝ **«Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման սոցիալ-տնտեսական նախադրյալները»** գլխում, քննարկվում են ինովացիաները տնտեսական համակարգի զարգացման համատեքստում, տարածքային ինովացիոն համակարգի ներուժի ձևավորման առանձնահատկությունները, ինչպես նաև տարածքային ինովացիոն համակարգերի առանցքային բաղադրիչներն ու դրանց չափման մոտեցումները:

Ատենախոսության երկրորդ՝ «***Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում***» գլխում կատարվել է տարածքային ինովացիոն համակարգի միջազգային փորձի վերլուծություն, ինչպես նաև քննարկվել են տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման մարտահրավերները և առանձնահատկությունները ՀՀ-ում:

Ատենախոսության երրորդ՝ «Տարածքային ինովացիոն համակարգի կառավարման բարելավման ուղիները ՀՀ-ում» գլխում վերլուծվել են տարածքային ինովացիոն համակարգերի ռազմավարական կառավարման հնարավորությունները ՀՀ-ում, տարածքային ինովացիոն համակարգի զարգացման կառավարչական որոշումների շրջանակը, ինչպես նաև տարածքային ինովացիոն համակարգի կառավարման կատարողականի առանցքային ցուցիչները:

Ուսումնասիրության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը

Հետազոտության համար տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմք են ծառայել հայ և արտասահմանցի տնտեսագետների աշխատությունները, գիտական կազմակերպությունների մշակումները, տնտեսագիտական դասական և արդի տեսությունների հիմնադրույթները, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները, Համաշխարհային բանկի, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության, ԵՄ և ՏՀԶԿ վիճակագրական ցուցանիշները, ինչպես նաև տարբեր փորձագետների գնահատականներ:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության գիտական նորույթը ՀՀ տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման, զարգացման և կառավարման ուղղությամբ նոր մոտեցումների մշակումն է, որն արտահայտվում է հետևյալ դրույթներով.

- Առաջարկվել է ՏԻՀ-ի կառավարման ինստիտուցիոնալ մոտեցում, հաշվի առնելով տարածաշրջանային ինովացիոն ենթակառուցվածքների ձևավորման միջազգային առաջավոր փորձը, պետական և մասնավոր հատվածի ներդաշնակ համագործակցությունը, ինչպես նաև տարածքային ինովացիոն գործունեության խթանման նպատակով պետական արդյունավետ քաղաքականության միջամտությունը:
- ՏԻՀ զարգացման գնահատման համար մշակվել է Տարածքային ինովացիոն ներուժի բազմաչափ գնահատման ընդլայնված մոդել, որը տնտեսավարման ավանդական գործոններից բացի (աշխատուժ, կապիտալ) ներառում է ՏԻՀ-ի առանցքային բաղադրիչներ՝ գիտահետազոտական ներդրումներ, մարդկային կապիտալ, ինովացիոն ենթակառուցվածքներ, պետական աջակցություն և տեխնոլոգիական առաջընթաց, հնարավորություն ընձեռելով հիմնավորելու տարածքային ինովացիոն ռազմավարական կառավարման նպատակահարմարությունը:
- Մշակվել է ՏԻՀ զարգացման հնարավորությունների համընդհանուր ցուցիչ՝ հիմնված տարածքային ինովացիաների իրականացման ռեսուրսային հնարավորությունների, ինչպես նաև կազմակերպչահրավական գործոնների վրա, գնահատելու համար կառավարչական գործառույթների ընթացքը տարածքային ինովացիաների գեներացման, ներդրման կազմակերպման ու վերահսկողության, ինչպես նաև սպառման խթանման շղթայում:
- Առաջարկվել է տարածքային ինովացիոն համակարգի կառավարման նոր մոդել՝ կատարողականի առանցքային ցուցիչներով, որը հնարավորություն է ընձեռում մի կողմից ապահովելու ՏԻՀ-ի գործունեության աջակցող գործառույթների արդյունքային պարբերական չափելիություն, մյուս կողմից, դրա հիման վրա կայացնելու տարածքային ինովացիոն գործունեության առաջընթացին նպաստող համապատասխան կառավարչական որոշումներ:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսության գիտական 2-րդ նորույթն իր տրամաբանության մեջ շատ նման է տնտեսական աճի ապահովման Սոլոուի մոդելին, քանի որ վերջինս ևս իր մեջ բացի աշխատուժից և կապիտալից, ներառում է նաև տեխնոլոգիական կամ գիտահետազոտական բաղադրիչ, ըստ որի ատենախոսի կողմից ավելացված տարածքային բաղադրիչը մոդելի փոփոխության առումով, կարծում ենք, այնքան էլ էական չէ:
2. Ցանկալի կլիներ, որ հեղինակն ատենախոսության մեջ ուսումնասիրեր նաև «նորամուծական պաուզա (դադար)» կատեգորիան, քանի որ իրականում ժամանակ առ ժամանակ, հատկապես, ճգնաժամերից առաջ մենք գործ ենք ունենում նորամուծական դադարի, իսկ երբեմն էլ նորամուծությունների գրեթե բացակայության հետ: Մյուս կողմից տնտեսությունը կարող է դառնալ մրցունակ և նորամուծական՝ մեկ շնչի հաշվով 13000 ԱՄՆ դոլարի հասնող ՀՆԱ ունենալու պարագայում, իսկ նման ցուցանիշների Հայաստանի Հանրապետությունը, առավել ևս անհամաչափ տնտեսական զարգացվածություն ունեցող մարզերը դեռևս չեն հասել:
3. Ատենախոսության մեջ չկա անդրադարձ Ակադեմիական քաղաքին և դրա հետ համադրության համատեքստում ՏԻՀ-ի ուսումնասիրությանը: Ստացվում է, որ ատենախոսության մեջ դրված է գիտահետազոտական համակարգի տարածքային կամ ապակենտրոնացված զարգացման մոդելը, իսկ ՀՀ-ում զարգացումներն ընթանում են կենտրոնացման մոդելով: Ատենախոսության որոշ մասերում անդրադարձ է կատարվում նաև ԽՍՀՄ փորձին, սակայն այդ նույն ԽՍՀՄ մոդելում բավականին մեծ տարածում ուներ «Ակադեմիական քաղաք կամ Академгородок (Նովոսիբիրսկ)» հասկացությունը: Հետևապես, հստակեցման կարիք կա, թե այս երկու մոդելներից ո՞րն է ապահովում առավել մեծ արդյունավետություն և զարգացում: Իսկ եթե դիտարկվեր նաև Ճապոնիայի փորձը, ապա հեղինակը կնկատեր, որ այդ երկրում զարգացման սխեման կառուցվում է 4 խոշոր կենտրոնների վրա, այսինքն՝ ամբողջ երկրի տարածքը բաժանվում է զարգացման կլաստերիզացված 4 կենտրոնների, որը սկզբունքորեն այլ մոտեցում է: Արդյունքում, օրինակ՝ բոլոր մարզերում նորամուծական համակարգ զարգացնելու անհրաժեշտությունը դուրս է գալիս և կիրառվում է խմբավորման տարբերակը:
4. Ատենախոսության մեջ խոսվում է նաև ռուս-ուկրաինական պատերազմի ժամանակ Հայաստանի տեխնոլոգիական արտադրանքի մրցունակության աճի և ներուժի ավելացման մասին, սակայն հստակ տարանջատում չկա, թե դա որքանով էր պայմանավորված այդ ոլորտում հայ մասնագետների և/կամ ռելոկանտ հանդիսացող ռուս մասնագետների ներգրավվածության հետ: Այս համատեքստում բավականին հետաքրքիր կլիներ, եթե կատարվեր նաև համեմատական վերլուծություն:
5. Աշխատանքում անդրադարձ է կատարվում նաև միջազգային կորպորացիաների կողմից Երևանում և մարզերում ստեղծված զարգացման կենտրոններին՝ Մայքրոսոֆթ, Սամսունգ, Թումո, Հայ-հնդկական ՏՀՏ և այլն, սակայն այս համատեքստում չի դիտարկվում ուղեղների արտահոսքի, և այս կենտրոնների միջոցով նորամուծական գաղափարներն այլ երկրներում առևտրայնացնելու, ինչպես նաև դեռևս 1991թ.-ին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո սկիզբ առած ինտելեկտուալ բարձր ունակություններ ունեցող աշխատուժի երկրից տարբեր ցանցերի միջոցով դուրս բերման ու «աշխատուժի գլխատման» հիմնահարցին: Այս հիմնահարցին բավականին

հետաքրքիր կերպով անդրադարձ է կատարվում նաև Համաշխարհային տաղանդների մրցունակության համաթիվի (Global Talent Competitiveness Index) հաշվարկման շրջանակներում, որին ևս ցանկալի կլիներ, որ ատենախոսն անդրադառնար:

6. Էջ 102-ում անդրադարձ է կատարվում է նաև կիրառական հետազոտություններին և դրանց առևտրայնացման հիմնահարցերին, սակայն այստեղ ուսումնասիրության առանցքից դուրս են մնացել հիմնարար (ֆունդամենտալ) հետազոտությունները: Վերջիններս, իհարկե, շատ դժվար են առևտրայնացվում, սակայն կարճաժամկետ շահույթ հետապնդելով արդյոք պետք է երկրորդային պլան մղվի ֆունդամենտալ կամ հիմնարար հետազոտությունների համակարգը, թե՞ իրականում կիրառական գիտությունը պետք է կառուցվի դրա հենքի վրա:
7. Աշխարհում և, հատկապես, եվրոպական երկրներում թվային տեխնոլոգիաների զարգացման շրջանակներում բավականին մեծ տարածում է սկսում գտնել նաև շրջանաձև կամ ցիրկուլյար գիտությունը, իսկ գիտության ապագան կապվում է հենց դրա հետ: Սա նշանակում է, որ խոշոր գիտական կենտրոններում գիտահետազոտական անձնակազմերը մեկ տեղում մնալու են միայն կոնկրետ նախագծի շրջանակներում: Այս համատեքստում հետաքրքիր կլիներ տարածքային նորամուծական համակարգի ձևավորման և զարգացման տրամաբանությունը կապել նաև նման նոր մոտեցումների հետ:
8. Աշխատանքում ՏԻՀ-ի վերաբերյալ արվող առաջարկություններից միայն մեկ-երկու հատվածում է հանդիպում կոնկրետ ՀՀ մարզի տեսանկյունից զարգացման մոդելի առաջարկություն, այնինչ՝ կարելի էր առանձին մարզերի ներուժի գնահատման համատեքստում ներկայացնել նաև որոշակի ֆինանսատնտեսական հաշվարկներ՝ ցույց տալու համար հնարավոր տարածքային նորամուծական կենտրոնների զարգացման հնարավորությունները: Հասկանալի է նաև, որ տարածքային ինովացիոն զարգացման կենտրոնները ձևավորվում են ֆինանսական կենտրոնների շուրջ, որի մոդելը կրկնօրինակելու փորձ արվեց Դիլիջանում՝ Դիլիջանի միջազգային դպրոցի (United World College Dilijan) շրջանակներում, իսկ այդ փորձի լավագույն օրինակներն են Սինգապուրը, Նյու Յորքի կողքին գտնվող Բոստոնը՝ իր համալսարաններով, Լոնդոնին շատ մոտ գտնվող Քեմբրիջը և այլն: Այսինքն՝ մարզերում նորամուծական համակարգի զարգացման հիմքերը պետք է փնտրել նաև ֆինանսական կենտրոնների ձևավորման մեջ:
9. Աշխատանքում օգտագործվում են մի շարք օտարալեզու տերմիններ, որոնց հայերեն համարժեքներն առկա են. տրենդ՝ միտում, գլոբալ՝ համաշխարհային, էֆեկտիվություն՝ արդյունավետություն, էլաստիկություն՝ ճկունություն, մեխանիզմ՝ կառուցակարգ, ինդեքս՝ համաթիվ, կոնցեպցիա՝ հայեցակարգ, պոտենցիալ՝ ներուժ և այլն: Աշխատանքը զերծ չէ նաև որոշ խմբագրական և տեխնիկական բնույթի թերություններից (բանաձևերը համարակալված չեն և այլն):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքն ու հետազոտության ընթացքում ստացված արդյունքների նշանակությունը և բացասական ազդեցություն չեն թողնում հետազոտության ընդհանուր գնահատականի վրա:

Ն. Սարատիկյանի թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն, ամփոփ և գիտական պատշաճ մակարդակով կատարված հետազոտություն է: Ատենախոսը դրսևորել է մասնագիտական գիտելիքներ և վերլուծական ընդունակություններ, ինչի մասին վկայում են ինչպես ատենախոսությունը, այնպես էլ դրանում ստացված արդյունքները:

Ատենախոսության հիմնական դրույթներն ամփոփված են 13 գիտական հոդվածներում, իսկ սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսությանը: Հեղինակի կողմից մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները հիմնականում կարող են կիրառվել ՏԻՀ զարգացման և արդյունավետության բարձրացման համար:

Այսպիսով՝ Նարեկ Գանձափարի Սարատիկյանի՝ «Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,
ՀՀ ՊԿԱ կառավարման ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝ Վ.Վ. Խաչատրյան

Վ.Վ. Խաչատրյանի ստորագրությունը հաստատում եմ.

ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ս.Հ. Պողոսյան

02.02.2026թ.